ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ _____/Ս. Դեղոյան/ «31» օգոստոս 2022 թ.

Կ.Տ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի

մարզ համայնք

հ. 179 հիմնական դպրոցի 4ա/ դասարանի

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Նազիկ Սամվելի Ավագյան

դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

« 2022 - 2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ *(դասարանի ընդհանուր բնութագիրը)* _ 4-րդ ա/ դասարանում սովորում են 35 աշակերտ՝ 15 տղա, 20 աղջիկ: Դասարանն այս տարի համալրվել է 5 նոր աշ:Նրանք արագորեն հարմարվել են նոր դասընկերների և ուսուցիչների հետ:ակերտներովՈՒսման որակը բարձր է: Դասարանը համախմբված է, շատ են շնորհալի երեխաները: Դասարանում իշխում է ընկերասիրությունը, ազնվությունն ու արդարամտությունը: Սովորողները հարգում են միմյանց և ուսուցիչներին, բազմակողմանի զարգացած են, օժտված են վառ երևակայությամբ, ունեն զանազան հետաքրքրություններ: Դասարանում շատերը հաճախում են պարի և գեղարվեստի խմբակներ, զբաղվում են սպորտով:Դասարանում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:Դասարանն աչքի է ընկնում իր ակտիվությամբ, մասնակցություն է ցուցաբերում համադպրոցական, ներդպրոցական միջոցառումներում;Ակտիվորեն պահպանում է ներքին կարգապահական կանոնները;Դասարանում կազմակերպվում են թեմատիկ, ուսուցողական, ճանաչողական էքսկուրսիաներ;Մեծ ծնողների ներգրավվածությունը ուսումնակազմակերպչական հարցերում;

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հետևել սովորողների առաջադիմությանը և կարգապահությանը, կազմակերպել աշխատանքներ՝ ուղղված աշակերտների կարգապահությանը, լավ վարքի դրսևորմանը համագործակցելով աշակերտների, ծնողների, ՄԿԱ և ՈՒԱ գծով տնօրենի տեղակալների և դպրոցի տնօրենի հետ: Նպաստել սովորողների մեջ կազմակերպչական հմտությունների և սեփական դիրքորշման ձևավորմանը ու զարգացմանը: Դաստիարակել ընկերասիրության և կարեկցանքի զգացում: Խթանել սովորողների հետաքրքրությունը դեպի ուսումը: Հետևել դասարանի մաքրությանը, դպրոցամերձ տարածքի կանաչապատմանը, դասագրքերի ու դասարանի կահույքի պահպանությանը: Ներգրավել սովորողներին տարբեր աշխատանքային և ուսումնական ոլորտներում, տարբեր միջոցառումներում:

Իրականացնել կազմակերպչական աշխատանքներ

Ուսումնադաստիարակչական աշխատանքները տանելիս հատկապես ուշադրություն դարձնել աշակերտների անհատական և տարիքային առանձնահատկություններին: Կազմակերպել տարատեսակ արտադասարանական միջոցառումներ և էքսկուրսիաներ ուսումնադաստիարակչական նպատակներով: Ինչպես նաև՝

*Իրազեկել աշակերտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին:

*Բարձրացնել ուսման որակի արդյունավետությունը

Ուսումնական գործընթացը դարձնել ավելի հետաքրքիրկիրառել նոր մեթոդներ

*Զարգացնել աշակերտների տրամաբանական և ստեղծագործական մտածողությունը:

- Որոշ աշխատանքներ տանել կարգազանց աշակերտների հետ;
- Անցկացնել զրույցներ բացակայող և դասերից ուշացող աշակերտների հետ;
- Աշխատել թույլ սովորող աշակերտների հետ:
- Համագործակցել դասարանում դասավանդող ուսուցիչների հետ:
- Համագործակցել ծնողական խորհրդի հետ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն __Հայեցի դաստիարակության գլխավոր հենասյունը հոգևոր դաստիարակությունն է:Պետք է ցույց տալ քրիստոնեության և հայ եկեղեցու դերն ու նշանակությունը համայն մարդկության կյանքում՝ հայ ժողովրդի կյանքում՝ բացահայտել հայկական ինքնության պահպանման գործում հայ եկեղեցու դերակատարումը;Հայ աշակերտը պետք է գիտակցի, որ հայ է, քրիստոնյա, հայ առաքելական եկեղեցու հետևորդ՝ որի շնորհիվ պահպանել ենք մեր հայկական ինքնությունը, երկիրն ու լեզուն: Աշակերտների մեջ սերմանել հայրենասիրություն, հարգանք մեծերի նկատմամբ, ընկերասիրություն և ազնվություն:Ծանոթացնել սովորողներին Հայաստանի ժամանակակից հոգևոր կյանքին:Աշակերտը պետք է գիտակցի, որ հայոց եկեղեցին, քրիստոնեությունը համարդկային ու համազգային արժեքների կրողն է:Այն սերմանում է հույս, հավատ, սեր, բարություն, համերաշխություն:

3.2 Գեղագիտական դաստիարակություն _Ցույց տալ արվեստի դերը և նշանակությունը հայ ժողովրդի կյանքում: Հայկական մշակույթի մասին զրույցներ անցկացնել և բացատրել, թե ինչով է հայկական մշակույթը առանձնանում և տարբերվում: Հիշել նաև օտարազգի նշանավոր արվեստագետների: Կազմակերպել էքկուրսիաներ տուն-թանդարաններ և պատկերասրահներ, <<վիրտուալ>> թանգարաններ:Գեղագիտական դաստիարակությունը նպաստում է սովորողների գեղագիտական ընկալումների, գեղագիտական կուլտուրայի ձևավորմանը: Առանց գեղագիտական դատողության և մտածողության անձը չի կարող գնահատել արվեստի գործերը, ունենալ գեղագիտական ճաշակ, որը գեղեցիկը գնահատելու կարևոր միջոց է:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն _Սերմանել սեր դեպի հայրենիքը, դաստիարակել հայրենասիրություն և արժանապատվություն: Ծանոթացնել որոշ պատմական հերոսական դրվագների հետ, պատմել հայ բանակի ձևավորման, հերոսական ճակատամարտերի մասին

։Ռազմահայրենասիրական դաստիարակության համար կարևոր դեր են խաղում մեծ հայրենասերների , ֆիդայիների, Անդրանիկի, Նժդեհի՝ Դրոյի՝ Նիկոլ Դումանի, ապրած կյանքն ու գործունեությունը, Սարդարապատի, Արցախյան հերոսամարտերի անմոռաց կերպարներն ու հավերժող օրինակները:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն __Աճող սերնդի առողջությունը, դրա ամրապնդումը և պահպանումը պայմանավորված է ֆիզիկզկզն դաստիարակությամբ, որի նպատակն է ապահովել սերունդների ֆիզիկական և հոգևոր ուժերի ներդաշնակությունը:Ֆիզկուլտուրան մտքի, մտածողության շարժիչ է, դեղամիջոց է, բշծկության մի մաս:Պետք է իրականացնել առողջ ապրելակերպի կանոնների և դրույթների քննարկում և վերլուծում: Խոսել հայ նշանավոր մարզիկների մասին և սատարել սպորտային խմբակների հաճախող աշակերտներին: Հետևել սովորողների ֆիզիկական առողջության և անհատական հիգիենային:

3.5 Աշխատանքային դաստիարակություն _Աշխատասիրության նշանակության և «աշխատանք» հասկացության մասին զրույցներ վարել և տարբեր միջոցառումների (շաբաթօրյակներ, կազմակերպչական աշխատանքներ) մասնակից դարձնել աշակերտներին, ձևավորելով աշխատանքի կուլտուրան աշակերտների մեջ: Պետք է աշակերտների գիտակցությանը հասցնել, որ աշխատանքի շնորհիվ է մարդը դաստիարակվում, կոփվում, ձեռք բերում բարոյական բ արձր հատկանիշներ:Տեղին է նշել Ուշինսկու խոսքերը.Միայն աշխատանքի ներքին, հոգեկան, կենարա ուժն է իբրև աղբյուր ծառայում մարդկային արժանապատվության , դրա հետ միասին նրա բարոյականության, երջանկության համար:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Բնության հավասարակշռությունը և դրա պահպանությունը մեր ժամանակներում նույնպես արդիական է և հրատապ: Այն համաշխարհային հիմնախնդիր է, որով զբաղվում է ողջ մարդկությունը է:Աշակերտներին ցույց տալ բնության դերն ու նշանակությունը յուրաքանչյուրիս կյանքում: Սովորեցնել սիրել և պահպանել մայրենի հողը և բնությունը, մաքուր պահել դպրոցի տարածքը: Յուրաքանչյուր ոք պետք է շրջակա միջավայրի պահպանությունը դարձնի ամենօրյա պարտականություն:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ _Պետության գլխավոր հենասյուներն են ընտանիքը, դպրոցը, բանակը, եկեղեցին:Ընտանիք դպրոց փոխհամաձայնեցված գործակցությամբ են պայմանավորված արդյունավետ ուսումնադաստիարակչական աշխատանքները:Որքան ամուր է , ներդաշնակ դպրոց-ընտանիք կապը՝ այնքան շահեկան է աշակերտի համար, որովհետև այն նպաստում է աշակերտների նպատակային և ուղղորդված դաստիարակությանն ու կրթությանը; __Ամուր պահել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Պարբերաբար կազմակերպել ժողովներ և՛ աշակերտների, և՛ծնողների հետ: Ընդգրկել ծնողներին դպրոցի և դասարանի առօրյային:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման Ժամկետը	Կատարողներ
01.09.2022	Գիտելիքի օրը	01.09.2022	
1-ին շաբաթ	Աշակերտներին ծանոթացնել դպրոցական կանոններին :Իմ իրավունքները և պարտականությունները:	08.09-09.09	Դասղեկ և աշակերտներ
2-րդ շաբաթ	Ինչպե՞ս եմ տեսնում իմ Հայրենիքը:Ծանոթացնել հայկական պետական խորհրդանիշներին՝ օրհներգ, զինանշան, դրոշ ;	15.09-16.09	Դասղեկ և աշակերտներ
3-րդ շաբաթ	Հայաստանի Անկախության օր;Արժևորել անկախությունն ու ազատությունը որպես պետականության պահպանման կարևոր գործոն:	22.09-23.09	Դասղեկ և աշակերտներ
4-րդ շաբաթ	Հայ զինվո՛ր, խոնարհվում եմ քո առաջ Իրազեկել աշակերտներին մեր պատմության մասին, պատմել հայ զինվորների սխրանքների և նրանց նվիրվածության մասին:	29.09-30.09	Դասղեկ և աշակերտներ
5-րդ շաբաթ	Աշնանային հրաշք:Բնապահպանական և գեղագիտական դաստիարակության միջոցով պատկերացում կազմել բնության փոփոխության, ամասին, տեսնենլ աշնան զարմանահրաշ գույները:Կազմակերպել ինտեգրված դասղեկի ժամ՝կերպարվեստ, երաժշտություն, ասմունք:	06.10-07.10	Դասղեկ և աշակերտներ
6-րդ շաբաթ	Իմ սիրելի ուսուցիչ: ՈՒսուցչին նվիրված փոքրիկ ցերեկույթ, ուսուցչի աշխատանքի գնահատում:Բարձրացնել սերն ու հարգանքը ուսուցչի նկատմամբ:	13.10-14.10	Դասղեկ և աշակերտներ
7-րդ շաբաթ	Երևան դարձած մեր էրեբունի:Հաղորդել պատմաշակութային տեղեկություններ Երևանի հիմնադրման և նրա անցած պատմության մասին	20.10-21.10	Դասղեկ և աշակերտներ
8-րդ շաբաթ	Սասնա ծռեր:Ռազմահայրենասիրական դաստիարակության նշանակությունը մեր կյանքում:	03.11-04.11	Դասղեկ և աշակերտներ
9-րդ շաբաթ	Մեր ծնողները մեր կյանքում:Սիլվա Կապուտիկյան, Հովհաննես Շիրազ:	10.11-11.11	Դասղեկ և աշակերտներ

10-րդ շաբաթ	Դու մեր երգի Մեսրոպ Մաշտոց:ԿՈՄԻՏԱՍ	17.11-18.11	Դասղեկ և աշակերտներ
11-րդ շաբաթ	Արամ Խաչատրյան:Այցելություն Արամ խաչատրյան -տուն թանգարան:	24.11-25.11	Դասղեկ և աշակերտներ
12-րդ շաբաթ	Ինչպես հասկանալ, թե ով է իսկական ընկերը; Ղազարոս Աղայանի հեքիաթները:	28.11-02.12	Դասղեկ և աշակերտներ
13-րդ շաբաթ	Բնության և մարդկության սերտ կապի մասին Բնական աղետները և դրանց հետևանքները (դեկտեմբերի 7):Երկրաշարժ	01.12-09.12	Դասղեկ և աշակերտներ
14-րդ շաբաթ	Բոլոր մասնագիտությունները կարևոր են; Բոլորս տարբեր ենք, բայց ապրում ենք միասին	08.12-16.12	Դասղեկ և աշակերտներ
15-րդ շաբաթ	Հայկական ավանդույթներն ու սովորույթները:Հին ու նոր ավանդույթներ:Կարևորել ավանդույթների դերը ազգապահպանության գործում:	15.12-23.12	Դասղեկ և աշակերտներ
16-րդ շաբաթ	Տարեմուտի խոհեր.Թող հնչեն զանգերն ի լուր: 1-ին կիսամյակի ամփոփում	22.01-13.01	Դասղեկ և աշակերտներ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2-րդ կիսամյակ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
17-րդ շաբաթ	Իմ հայրենիքի պատմության հայտնի էջերից	12.01-20.01	Դասղեկ և աշակերտներ
18-րդ շաբաթ	Հայոց բանակի օր	19.01-27.01	Դասղեկ և աշակերտներ
19-րդ շաբաթ	Ո՞վ է ամենալավ ընկերը	26.01-03.02	Դասղեկ և աշակերտներ
20-րդ շաբաթ	Իմ նախասիրությունները	06.02-10.02	Դասղեկ և աշակերտներ
21-րդ շաբաթ	Այցելություն Մատենադարան :Ծանոթացնել Մատենադարանի համաշխարհային նշանակության մասին:	13.02-17.02	Դասղեկ և աշակերտներ

22-րդ շաբաթ	Հայկական ավանդույթների մասին Տյարն ընդ առաջ:Տալ մեկնաբանություններ նրա նշանակության մասին:	20.02-24.02	Դասղեկ և աշակերտներ
23-րդ շաբաթ	Այցելություն ազգային պատկերասրահ	27.02-03.03	Դասղեկ և աշակերտներ
24-րդ շաբաթ	Կանանց միջազգային օր	06.03-10.03	Դասղեկ և աշակերտներ
25-րդ շաբաթ	Կոնֆլիկտների լուծման խաղաղ տարբերակների մասին	13.03-17.03	Դասղեկ և աշակերտներ
26-րդ շաբաթ	Խաղաղության դաս:Հանդուրժողականությունը՝ փոխադարձ հարգանքը երջանիկ և արժանապատիվ ապրելու գրավականն է:Բացահայտել պատերազմի տխուր հետևանքները, որոնք անդառնալի են:	20.03-24.03	Դասղեկ և աշակերտներ
27-րդ շաբաթ	Մայրության և գեղեցկության տոնի մասին;	03.04-07.04	Դասղեկ և աշակերտներ
28-րդ շաբաթ	Զատկի տոնը և իր խորհուրդը:Այցելություն Երևանում գտնվող եկեղեցիներ	10.04-14.04	Դասղեկ և աշակերտներ
29-րդ շաբաթ	Այցելություն կազմակերպել Մայր Հայաստան թանգարան:Կրկին հիշատակելու և երախտիքի խոսքեր հնչեցնել հին ու նոր հերոսների մասին :	17.04-21.04	Դասղեկ և աշակերտներ
30-րդ շաբաթ	Այցելություն Ծիծեռնակաբերդ:Հարգանքի տուրք մատուցել 1915 թվականի ցեղասպանության զոհերի հիշատակին	24.04-28.04	Դասղեկ և աշակերտներ
31-րդ շաբաթ	Մեր լեզուն մեր զենքն է:Արժևորել մայրենի լեզվի տիրապետումը, գնահատել այն որպես հայ ժողովրդի ինքնության պահպանման կարևորագույն գործոն:	01.05-05.05	Դասղեկ և աշակերտներ
32-րդ շաբաթ	Մարտիրոս Սարյան:Կազմակերպել էքսկուրսիա դեպի թանգարան	08.05-12.05	Դասղեկ և աշակերտներ
33-րդ շաբաթ	Սարդարապատ:Տարեվերջյան էքսկուրսիա դեպի Սարդարապատ հերոսական համալիր	15.05-19.05	Դասղեկ և աշակերտներ
34-րդ շաբաթ	Աշխատասիրությունը գեղեցկացնում է մարդուն 2-րդ կիսամյակի ամփոփում	22.05-26.05	Դասղեկ և աշակերտներ